ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«12» ապրիլի 2010թ. N ---Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է*.

Տալ համաձայնություն ՀՀ ժողովրդական նկարիչ Մկրտիչ Սեդրակյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան-24 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Նախաձեռնության /որոշման/ հեղինակ
Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ **Միքայել Դովլաթյան**

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ ՄԿՐՏԻՉ ՍԵԴՐԱԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում ՀՀ ժողովրդական նկարիչ Մկրտիչ Սեդրակյանի որդիների՝ Դավիթ և Վարդան Սեդրակյանների դիմումը:

Հարցը քննարկվել է Երևանի ավագանու կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի 2010թ. ապրիլի 1-ի նիստում և քվեարկության արդյունքում անցել միաձայն:

Կրթության, մշակույթի, երիտասարդության հետ տարվող Աշխատանքների, առողջապահության, սոցիալական պաշտպանության,ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ՝ **Միքայել Դովլաթյան**